ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.02.2022թ. թիվ 26/26-1/2314-2022 գրությամբ «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 03.02.2022թ. թիվ 08.1//2134-2022 գրության հիման վրա, 10.02.2022թ. թիվ 26/26-1/2314-2022 գրությամբ նախաձեռնել է «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է նախաձեռնել «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում նախաձեռնելու ընթացակարգ:

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ն առարկում է նշված ընթացակարգի դեմ ներքոնշյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 03.08.2021թ կնքվել է թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանվել է, որ ծառայությունը պետք է մատուցվի 2021 թվականի հոկտեմբեր ամսին, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում՝ 30 օրացուցային օր տևողությամբ:

Պատվիրատուն «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին ուղղված իր իսկ գրությամբ փաստել է, որ 2021 թվականի նոյեմբերի 5-ի Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը հասցեագրված N 01-2286 գրությամբ Արցախի Հանրապետությունում համաճարակային իրավիճակով պայմանավորված առաջարկվել է անորոշ ժամկետով հետաձգել միջոցառման իրականացումը:

Վերոնշյալ գրության համար հիմք է հանդիսացել այն, որ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 05.11.2021թ. թիվ 01-2286 գրությունը, այն մասին, որ համաճարակային իրավիճակով պայմանավորված պայմանագրով նշված ժամանակահատվածում ծրագրի իրականացումն իրատեսական չեն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հորվածի համաձայն՛ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալներով պայմանավորված, ակնհայտ է, որ կողմերի միջև կնքված պայմանագիրը լուծվել է ոչ մեր կազմակերպության մեղքով, այլ ԱՀ և ՀՀ ԿԳՄՍ

նախարարությունների անգործության արդյունքում: Այսինքն այստեղ «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի մեղքի առկայությունը բացակայում է, ինչից ելնելով Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Խնդրում եմ, որպես ապացույց ուսումնասիրել մեր կողմից Բողոքներ քննող անձի աշխատակազմին 23.02.2022թ. № Գ23/0222-001 գրությամբ ներկայացված փաստաթղթերը»:

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/58 ընթացակարգի շրջանակներում 16.02.2022թ. ժամը 09:25-ին և 21.02.2022թ. ժամը 09:47-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.02.2022թ. թիվ 08.1//2134-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 03.08.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ն պարտավորվել էր իրականացնել միջոցառումների հետ կապված ծառայությունների մատուցումը, ինչը վերջինիս կողմից չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախարարությունը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը, միակողմանի լուծել է «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի հետ 03.08.2021թ կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1 գնման պայմանագիրը, ինչի մասին ծանուցումը 02.02.2022թ հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը ուղարկվել է նաև «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/58 ընթացակարգի շրջանակներում 16.02.2022թ. ժամը 09:25-ին և 21.02.2022թ. ժամը 09:47-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 03.08.2021թ. կնքվել է թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» ծածկագրով պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2021թ. ՀՀ ԿԳՄՍՆ կարիքների համար միջոցառումների հետ կապված ծառայությունների (Աջակցություն Արցախի Հանրապետության երիտասարդության ոլորտին) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

2. Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

«Ծառայությունը նախատեսում է «Աջակցություն Արցախի Հանրապետության երիտասարդության ոլորտին» միջոցառման իրականացում՝ դասընթացի ձևով (այսուհետ՝ Միջոցառում) Դասընթացը տևելու է 2 օր: Դասընթացի մասնակիցներն են Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության երիտասարդական կազմակերպություններից ներկայացուցիչներ, երիտասարդական հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ, շահագրգիռ պետական գերատեսչություններից ներկայացուցիչներ: Ընդհանուր՝ 36 մասնակից: Միջոցառման անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին

համապատասխան* *Միջոցառման անցկացման չափանիշներ Ծառայություն մատուցող կազմակերպությունը իրականացնում է Միջոցառման հետ կապված բոլոր կազմակերպչական աշխատանքները և դասընթացի բովանդակությունը՝ համաձայնեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն) հետ: Միջոցառման կազմակերպման նպատակով Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է՝ 1. Համակարգողի առկայություն (ծառայության մատուցման ողջ ընթացքում) համակարգողը ապահովելու է՝ • տարածքի հարմարեցումը Միջոցառման անցկացման ընդհանուր պահանջներին, • մասնակիցների կողմից ներկայացրած առաջարկների ներկայացումը Վարչությանը, • միջոցառման ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկանքի ներկայացում Վարչությանը: 2. Համակարգողի օգնականի առկայություն (ծառայության մատուցման ողջ ընթացքում) համակարգողի օգնականը ապահովելու է՝ • մասնակիցների կողմից ներկայացրած առաջարկների ամփոփումը և ներկայացումը համակարգողին, • մասնակիցների հետ հետադարձ կապի համակարգումը, • հնարավոր հարցերի համակարգումը և ուղղորդումը, • արդյունքների ամփոփումը: 3. Չորս դասընթացավարների առկայություն (16 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածությամբ) 4.Դասընթացավարների, համակարգողի, համակարգողի օգնականի տեղափոխությունը Երևանից Ստեփանակերտ և հետադարձ (6 մարդ) Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով: 5.Դադընթացավարների, համակարգողի, համակարգողի օգնականի կեցությունը Ստեփանակերտում (6 մարդ՝ 2 գիշեր) Հյուրանոց Ստեփանակերտում՝ 6 անձի համար՝ մեկտեղանոց, մեկ մահճակալով տաքացվող համարներում, 2 գիշեր: 6.Դասընթացավարների, համակարգողի, համակարգողի օգնականի սնունդը Ստեփանակերտում Սնունդը՝ առաջին օրը ընթրիք, երկրորդ օրը նախաճաշ, ճաշ, ընթրիք, իսկ երրորդ օրը՝ նախաճաշ, ճաշ: Նախաճաշ 6 անձի համար (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), Ճաշ 6 անձի համար (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) Ընթրիք 6 անձի համար (հաց, 3 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): 7.Միջոցառման մասնակիցների (36 մասնակից) համար սուրճի ընդմիջման

կազմակերպումը սուրճի ընդմիջում առաջին օրը՝ 1 անգամ, երկրորդ օրը՝ երկու անգամ, երրորդ օրը՝ 1 անգամ (յուրաքանչյուր անգամ քաղցրավենիք երեք տեսակի, յուրաքանչյուր տեսակից 72 կտոր, 36 մարդու համար հյութ, ջուր, սուրճ, թեյ): Ծանոթություն. Միջոցառման ընթացքում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման համար միջոցառման մասնակիցներին անհրաժեշտ է ապահովել անհրաժեշտ միջոցներով (բժշկական դիմակ, հականեխիչ (անտիսեպտիկ) հեղուկներ ձեռքերի ախտահանման համար): 8. Թուղթ ֆլիպ չարթի՝ 2 հատ Մարկեր՝ 10 հատ Գունավոր մարկերներ ֆլիպչարթի թղթի վրա գրելու համար սև, կապույտ, կարմիր, կանաչ և դեղին գույնի Գրիչ՝ 36 հատ գնդիկավոր գրիչ թափանցիկ պլաստմասե կաղապարով Նոթատետր՝ 36 հատ A5 չափի 70 թերթ վերևից պարույրով Մասնակցության վկայական՝ 30 հատ Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: 30 հատ ապակեպատ փայտե շրջանակ վկայականների համար: Վկայականի օրինակելի ձևը կցվում է»:

3. Պայմանագրի հավելված N 2-ով՝ ծառայության մատուցման ժամանակացույցով, սահմանվել է ծառայության մատուցման հետևյալ ժամկետը՝ 2021 թվականի հոկտեմբեր ամսին, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում՝ 30 օրացուցային օր տևողությամբ, ծառայության մատուցման հետևյալ հասցեն՝ Արցախի հանրապետություն, ք. Ստեփանակերտ:

4. Պատվիրատուն «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին ուղղված 02.02.2022թ. թիվ 08.1//2066-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 03.08.2021թ. կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» գնման պայմանագրով նախատեսված միջոցառումների հետ կապված ծառայությունները Ձեր կողմից չեն իրականացվել Պայմանագրով սահմանված ժամկետում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծում է Ձեզ հետ 03.08.2021թ. կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» գնման պայմանագիրը:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 02.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2022թ. թիվ 26/26-1/2314-2022 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 03.02.2022թ. թիվ 08.1//2134-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի համաձայն՝

1.Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2.Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպք***ում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. ***<u>Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը:</u>*** Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 03.08.2021թ. կնքվել է թիվ «ՀՀԿԳՄՆԷԱՃԾՁԲ-21/31-1» ծածկագրով պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2021թ. ՀՀ ԿԳՄՍՆ կարիքների համար միջոցառումների հետ կապված ծառայությունների (Աջակցություն Արցախի Հանրապետության երիտասարդության ոլորտին) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

2. Պայմանագրի հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

«Ծառայությունը նախատեսում է «Աջակցություն Արցախի Հանրապետության երիտասարդության ոլորտին» միջոցառման իրականացում՝ դասընթացի ձևով (այսուհետ՝ Միջոցառում) Դասընթացը տևելու է 2 օր: Դասընթացի մասնակիցներն են Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության երիտասարդական կազմակերպություններից ներկայացուցիչներ, երիտասարդական հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ, շահագրգիռ պետական գերատեսչություններից ներկայացուցիչներ: Ընդհանուր՝ 36 մասնակից: Միջոցառման անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին համապատասխան* *Միջոցառման անցկացման չափանիշներ Ծառայություն մատուցող կազմակերպությունը իրականացնում է Միջոցառման հետ կապված բոլոր կազմակերպչական աշխատանքները և դասընթացի բովանդակությունը՝

համաձայնեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության (այսուհետ՝ Վարչություն) հետ: Միջոցառման կազմակերպման նպատակով Ծառայություն մատուցող կազմակերպությունը ապահովելու է՝ 1. Համակարգողի առկայություն (ծառայության մատուցման ողջ ընթացքում) համակարգողը ապահովելու է՝ • տարածքի հարմարեցումը Միջոցառման անցկացման ընդհանուր պահանջներին, • մասնակիցների կողմից ներկայացրած առաջարկների ներկայացումը Վարչությանը, • միջոցառման ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկանքի ներկայացում Վարչությանը: 2. Համակարգողի օգնականի առկայություն (ծառայության մատուցման ողջ ընթացքում) համակարգողի օգնականը ապահովելու է՝ • մասնակիցների կողմից ներկայացրած առաջարկների ամփոփումը և ներկայացումը համակարգողին, • մասնակիցների հետ հետադարձ կապի համակարգումը, • հնարավոր հարցերի համակարգումը և ուղղորդումը, • արդյունքների ամփոփումը: 3. Չորս դասընթացավարների առկայություն (16 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածությամբ) 4.Դասընթացավարների, համակարգողի, համակարգողի օգնականի տեղափոխությունը Երևանից Ստեփանակերտ և հետադարձ (6 մարդ) Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով: 5.Դադընթացավարների, համակարգողի, համակարգողի օգնականի կեցությունը Ստեփանակերտում (6 մարդ՝ 2 գիշեր) Հյուրանոց Ստեփանակերտում՝ 6 անձի համար՝ մեկտեղանոց, մեկ մահճակալով տաքացվող համարներում, 2 գիշեր: 6.Դասընթացավարների, համակարգողի, համակարգողի օգնականի սնունդը Ստեփանակերտում Սնունդը՝ առաջին օրը ընթրիք, երկրորդ օրը նախաճաշ, ճաշ, ընթրիք, իսկ երրորդ օրը՝ նախաճաշ, ճաշ: Նախաճաշ 6 անձի համար (կարագ, պանիր, հաց, ջեմ, հիմնական ուտեստ (նրբերշիկ, պյուրե կամ ձվածեղ կամ խաշած ձու), թեյ, սուրճ), Ճաշ 6 անձի համար (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) Ընթրիք 6 անձի համար (հաց, 3 տեսակի աղցան, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք, թեյ, սուրճ): 7.Միջոցառման մասնակիցների (36 մասնակից) համար սուրճի ընդմիջման կազմակերպումը սուրճի ընդմիջում առաջին օրը՝ 1 անգամ, երկրորդ օրը՝ երկու անգամ, երրորդ օրը՝ 1 անգամ (յուրաքանչյուր անգամ քաղցրավենիք երեք տեսակի, յուրաքանչյուր տեսակից 72 կտոր, 36 մարդու համար հյութ, ջուր, սուրճ, թեյ):

Ծանոթություն. Միջոցառման ընթացքում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելման համար միջոցառման մասնակիցներին անհրաժեշտ է ապահովել անհրաժեշտ միջոցներով (բժշկական դիմակ, հականեխիչ (անտիսեպտիկ) հեղուկներ ձեռքերի ախտահանման համար): 8. Թուղթ ֆլիպ չարթի՝ 2 հատ Մարկեր՝ 10 հատ Գունավոր մարկերներ ֆլիպչարթի թղթի վրա գրելու համար սև, կապույտ, կարմիր, կանաչ և դեղին գույնի Գրիչ՝ 36 հատ գնդիկավոր գրիչ թափանցիկ պլաստմասե կաղապարով Նոթատետր՝ 36 հատ A5 չափի 70 թերթ վերևից պարույրով Մասնակցության վկայական՝ 30 հատ Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ: 30 հատ ապակեպատ փայտե շրջանակ վկայականների համար: Վկայականի օրինակելի ձևը կցվում է»:

Պայմանագրի հավելված N 2-ով՝ ծառայության մատուցման ժամանակացույցով, սահմանվել է ծառայության մատուցման հետևյալ ժամկետը՝ 2021 թվականի հոկտեմբեր ամսին, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայության մատուցումը սկսել ավելի կարճ ժամկետում՝ 30 օրացուցային օր տևողությամբ, ծառայության մատուցման հետևյալ հասցեն՝ Արցախի հանրապետություն, ք. Ստեփանակերտ:

Պատվիրատուն «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին ուղղված 02.02.2022թ. թիվ 08.1//2066-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 03.08.2021թ. կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» գնման պայմանագրով նախատեսված միջոցառումների հետ կապված ծառայությունները Ձեր կողմից չեն իրականացվել Պայմանագրով սահմանված ժամկետում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը միակողմանի լուծում է Ձեզ հետ 03.08.2021թ. կնքված թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» գնման պայմանագիրը:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 02.02.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

«ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմանը կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

1. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 05.11.2021թ. թիվ 01-2286 գրությունն ուղղված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վ. Դումանյանին, հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան Ձեր 27.10.2021թ. թիվ 01/24/17684-2021 գրության երախտագիտություն ենք հայտնում Արցախում նման ծրագրի իրականացման նախաձեռնության համար:

<u>Ցավոք, համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ նշված ժամանակահատվածում ծրագրի իրականացումն իրատեսական չէ: Ուստի, առաջարկում ենք այն անորոշ ժամանակով հետաձգել:</u> Համաճարակային իրավիճակի կայունացմանը զուգընթաց, Ձեր ղեկավարած գերատեսչության պատասխանատուների հետ աշխատանքներ կտարվեն ծրագրի իրականացման ուղղությամբ»;

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վ. Դումանյանի 22.11.2022թ. գրությունն ուղղված «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին, հետևյալ բովանդակությամբ.

«Տեղեկացնում եմ, որ 2021 թվականի նոյեմբերի 5-ի Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը հասցեագրված N 01-2286 գրությամբ /կցվում է/՝ Արցախի Հանրապետությունում համաճարակային իրավիճակով պայմանավորված առաջարկվել է որոշ ժամկետով հետաձգել միջոցառման իրականացումը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 6-րդ ենթակետի և «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» ծածկագրով պայմանագրի 7.10 ենթակետի պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ***<u>անհրաժեշտ է Ձեր գրավոր համաձայնությունը կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ</u>***

ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի օգոստոսի 3-ին կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» պայմանագիրը վաղաժամկետ լուծելու վերաբերյալ: Որից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կկատարվի տվյալ գնումները կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև կկնքվեն համաձայնագրեր վերը նշված պայմանագրերը վաղաժամկետ լուծելու մասին»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե*** Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Մինչդեռ՝ Ընկերության կողմից ներկայացված գրությունների, մասնավորապես՝ Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարի 05.11.2021թ. թիվ 01-2286 գրությունը, այն է՝ «Ցավոք, համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ նշված ժամանակահատվածում ծրագրի իրականացումն իրատեսական չէ: Ուստի, առաջարկում ենք այն անորոշ ժամանակով հետաձգել», ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.11.2022թ. գրությունը, համաձայն որի՝ Ընկերությանն առաջարկվել է, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարի 05.11.2021թ. թիվ 01-2286 գրությունը, տալ գրավոր համաձայնություն իր և «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ի միջև 03.08.2021թ. կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման թիվ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-21/31-1» պայմանագիրը վաղաժամկետ լուծելու վերաբերյալ, պարզ է դառնում Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտվել են իր կամքից անկախ հանգամանքներում, այն է՝

համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ նշված ժամանակահատվածում ծրագրի իրականացման անհնարինության հետևանքով:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***:

Ընդ որում՝ Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը:***

Վերոգրյալ փաստական հանգամանքների և կիրառման ենթակա իրավական նորմերի վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտվել են ոչ թե Ընկերության մեղքով, այլ ստեղծված համաճարակային իրավիճակով պայմանավորված, որի արդյունքում Պատվիրատուն առաջարկել է Ընկերությանը փոխադարձ համաձայնությամբ լուծել պայմանագիրը, թեև Պայմանագրի 7.10-րդ ենթակետով հստակ սահմանված է, որ Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում եմ, որ ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 10.02.2022թ. թիվ 26/26-1/2314-2022 գրությամբ «ԿՈՆՑԵՊՏ ԻՎԵՆԹՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**